

**1950-1960 ԹԹ. ԹՈՒՐՔԻԱՅԻ ԻՇԽՈՂ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵՔԹԱՇԻ ՍՈՒՖԻԱԿԱՆ
ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

Արշակ Գևորգյան
a.gevorkian@ysu.am

Բանալի բառեր՝ բեքթաշիներ, ալիներ, ժողովրդավարական կուսակցություն, Ադնան Մենդերես, Մեհմեթ Ֆուաթ Էյուփրյույու:

1925 թ. նոյեմբերի 30-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) կողմից ընդունված «Թեքքենների [*takiyya*]¹, զավիյենների [*zāwiya*] ու թյուրբենների [*turba*] փակման և թյուրբեապահների ու մի շարք այլ կոչումների վերացման մասին» №677 օրենքի² ուժով երկրի տարածքում փաստորեն արգելվեց սուֆիական թարիքաթների [*tarikā*] գործունեությունը:

Արգելքի ընդգրկման ծավալները պատկերացնելու համար բավական է նշել, որ Առաջին աշխարհամարտից հետո անգամ առավել առաջադիմական Ստամբուլում³ յուրաքանչյուր ութ

¹ Ելնելով սույն հոդվածի թեմատիկ ուղղվածությունից՝ իսլամական եզրաբանության միավորների և հատուկ անունների հայերեն տարբերակները տեքստում բերված են ըստ դրանց թուրքերեն հնչյունական ձևերի: Առաջին գործածությանը կից փակագծերում ներկայացված են եզրերի միջազգայնորեն ընդունված լատինատառ տառադարձումներն ըստ՝ Bearman et al. 2006:

² Օրենքը ԹՀ «Պաշտոնաթերթում» հրատարակվել և ուժի մեջ է մտել 1925 թ. դեկտեմբերի 13-ին: Տեքստը տե՛ս “Tekke ve Zāviyelerle Türbelerin Kapatılmasına ve Bunlarla İlgili Türbedârlık Gibi Diğer Bir Takım Unvânların Men’ ve İlgâsına Dâir Kânûn No: 677.” *T.C. Resmî Gazete*, 13.12.1341/1925, <http://www.resmigazete.gov.tr/arsiv/243.pdf> (Erişim Tarihi: 17.05.2018):

³ Ստամբուլի Սուլեյմանիե ձեռագրերի գրադարանում պահվող և 1919-1921 թթ. թվագրվող Էրզուրումլու Յեշիլգադե Մեհմեդ Սալիհ Էֆենդիի 56 էջանոց «Թեքքենների ուղեցույցում» ներկայացվում է գրման ժամանակաշրջանում

տղամարդուց մեկը հարում էր սուֆիական միաբանություններին (Buehler 2016:192): Քեմալականների օրենսդրական այս նախաձեռնությունն իր սուր ծայրով ուղղված էր առաջին հերթին Հանրապետության ստեղծումից ի վեր որևէ բնույթի քաղաքական ակտիվությունն ցուցաբերած թարիքաթների ⁴, այդ թվում՝ բեքթաշիների դեմ: Վերջիններս, ունենալով իշխանության կողմից հետապնդումների պայմաններում գործունեություն ծավալելու նշանակալի փորձ⁵, անցան ընդհատակ:

ժամանակի թուրքական մամուլում բեքթաշիների թեմայով մերթընդմերթ հայտնվող հրապարակումները ⁶ վկայում են, որ

Կոստանդնուպոլսում և հարակից շրջաններում գործող ընդհանուր առմամբ 345 թեքքե, որից 68-ը պատկանում էին քաղիրի [*Kādiriyya*], 63-ը՝ նաքքբանդի [*Nakshbandiyya*], 12-ը՝ բեքթաշի [*Bektāshīyya*] թարիքաթին և այլն (Aşkar 2000):

⁴ Ուշագրավ է, որ քեմալական շարժման շրջանում Մ. Քեմալն ակտիվորեն օգտվում էր սուֆիական միաբանությունների աջակցությունից: Բավական է նշել, որ մինչև հանրապետության հռչակումը ԹԱՄԺ կազմում 10 պատգամավոր ուղղակիորեն որևէ թարիքաթի անդամ էր՝ 2 նաքքբանդի, 2 մկլի [*Mawlawiyya*], 2 հելվելթի [*Khalwatiyya*], 3 բեքթաշի և 1 հոգի Հաջի Բայրամ [*Bayrāmiyya*] միաբանությունից (Çıplak 2017:22):

Որպես ազգայնամուլական շարժման առաջնորդ՝ Քեմալի հարաբերությունները բեքթաշիների հետ սկսվում են դեռ այ շարժման սաղմնային շրջանից: Արդեն 1919 թ. դեկտեմբերի 22-23-ին նա անձամբ եղել է Հաջըբեքթաշում՝ այցելելու միաբանության էպոնիմ Հաջը Բեքթաշ Վելիի (*Hādjdjī Bektāsh Walī*, մահ. 669/1270-71?) գերեզմանին և շահելու բեքթաշիների աջակցությունը շարժման կազմակերպական աշխատանքներում (Şapolyo 1971:16-18):

⁵ 1826 թ. հունիսի 15-ի դեպքերի արդյունքում օսմանյան սուլթան Մահմուդ II-ի կողմից Ենիչերիական կորպուսի ջախջախումից հետո վերջիններիս հետ սերտորեն փոխկապակցված բեկթաշիների միաբանությունը հայտնվեց պետական բռնաձնշումների կիզակետում: Չնայած դրան՝ ընդամենը շուրջ քառորդ դար անց՝ 1849 թ. ընդհատակից դուրս եկած թարիքաթն արդեն վերականգնել էր իր նախկին ազդեցության զգալի մասը (Birge 1937:79):

⁶ Տե՛ս «Ջումհուրիյեթ» թերթի օրինակով՝ «Bektaşiler!» *Cumhuriyet*, 08.06.1930; «13 Bektaşî Yakalandı.» *Cumhuriyet*, 13.06.1932; «İzmir’de Bektaşî Âyini Yapanlar Yakalandı.» *Cumhuriyet*, 10.11.1935; «Bektaşî Ayini Yapanlar Mahkûm.» *Cumhuriyet*, 03.02.1937; «İzmir’de Bektaşî Âyini Yapanlar.» *Cumhuriyet*, 16.06.1941; «Bektaşinin Duası.» *Cumhuriyet*, 18.11.1943; «Bektaşinin Sözü...» *Cumhuriyet*, 23.01.1946; «Parti

թարիքաթի գործունեությունը մինչև Ժողովրդավարական կուսակցության (ԺԿ) իշխանության գալն, ըստ էության, այդպես էլ չի ընդհատվել: Ուստի միանգամայն բնական է, որ 1952 թ. ակտիվ բեքթաշիների թիվը Թուրքիայում, թեև բավական նվազելով մի քանի անգամ զիջում էր միաբանության ալբանական թևին, այնուամենայնիվ հասնում էր 30 հազարի (Jong 2000:45): Ընդ որում, այս թիվը վերաբերում է անմիջականորեն թարիքաթի անդամներին և չի ընդգրկում ալևիներին⁷: Բեքթաշիները, ըստ էության, երբեք հանդես չեն եկել իբրև համազգային քվեարկությունների ժամանակ ալևիներին միավորող ուժ: Չնայած այս հանգամանքին՝ միաբանության քաղաքական կարևորությունը չի կարելի անտեսել (Massicard 2013:120):

Եղբայրությունների քաղաքական պոտենցյալի համատեքստում միանգամայն բնական է, որ Մենդերես քաղաքական գործչի շփումները բեկթաշիների հետ սկսվել էին դեռ մինչև նրա իշխանության գալը: Ընդ որում, դրանք պետք է դիտարկել այն լույսի տակ, որ թեև թե՛ նախընտանական շրջանի ԺԿ հայտարարություններում, թե՛ 1950 թ. հունիսի 2-ին ընդունված՝ Մենդերեսի առաջին կառավարության ծրագրում ընդգծվում էր, որ կուսակցությունը պատրաստակամություն է հայտնում շարունակել Թուրքիայում իբրև քեմալական դոկտրինի մաս իրականացվող լաիցիզմի քաղաքականությունը՝ չօգտագործելով իսլամն իբրև քաղաքական պայքարի և քարոզչության միջոց (Arar

Bektaşileri.” *Cumhuriyet*, 23.08.1951 և այլն: Ընդ որում, հստակորեն նկատվում է հրապարակումների տոնայնության անցումն ընդգծված բացասականից առավելապես չեզոքի:

⁷ «Alevilik» (*Alevîyya*, «ալևիականություն») և «Bektaşilik» («բեքթաշիականություն») եզրերը ժամանակակից մասնագիտական գրականության մեջ և հատկապես Թուրքիայի հասարակական հոլովություն մեծամասամբ օգտագործվում են գրեթե միևնույն իմաստով՝ թեև առաջինն անմիջականորեն շեշտում է հանրույթի քվազիէթնիկական բաղադրիչը, իսկ երկրորդը՝ կրոնական (Azak 2010:141):

1968:225-226), իրականում ԺԿ տասնամյակն ⁸ ազդարարեց Թուրքիայի Հանրապետությունում իսլամի դերի բարձրացման և դրա քաղաքականացման սկիզբը (Pelt 2008:93-94): Մենդերեսն ու ԺԿ-ական վերնախավն անուղղակի թելերով կապված էին սուֆիական տարբեր միաբանությունների (առավելապես՝ նաքշբանդիների) հետ՝ հաճախ ընտրական աջակցության դիմաց գործնականում դաշնակցելով նրանց հետ (Eligür 2010:57):

Հայտնի է, որ բեքթաշիների բաբաների թևի ⁹ ներկայացուցիչների հետ ԺԿ վերնախավի շփումները բավական ակտիվ էին 1950 թ. մայիսյան ընտրություններին նախորդող շրջանում: Նևշեհիրում Հաջը Բեքթաշ Վելիի գերեզմանի կարգավիճակի ճանաչման դիմաց բեքթաշիների ընտրական աջակցության հարցի շուրջ Ահմեթ Սըրրը դեդեբաբայի ¹⁰ պատվիրակները 1949 թ. մեկական հանդիպում են ունեցել ԺԿ ղեկավարության հետ Ստամբուլի Ջեյթինբուրնու և Էրենքոյ թաղամասերում¹¹ (Koca 2005:95): Պատահական չէ, որ մինչև 1957 թ. ԺԿ մասնակցած բոլոր համապետական ընտրություններում

⁸ ԺԿ իշխանության ժամանակաշրջանում Թուրքիայի ներքին քաղաքականության մեջ իսլամի դերակատարության մասին մանրամասն տե՛ս Кондакчян 1983:114-179:

⁹ Դեռ 19-րդ դ. 60-ական թթ.՝ Ահմեդ Ջելալեդդին չելեբիի օրոք, բեքթաշիների ընդհանուր հանրությից, Հաջը Բեքթաշ Վելիի հետ կապի բնույթի հիմքով, վերջնականապես առանձնացել էին բաբաների/բաբագան (վերջինիս հետ կապված էին գաղափարական՝ ուղու ժառանգականությամբ) և չելեբիների/դեդեգան (կապված էին անմիջական՝ պորտի ժառանգականությամբ) ճյուղերը (Акимышкин 1991:40; Özün 2015:503):

¹⁰ Դեդեբաբան բաբագան բեքթաշիների հիերարխիկ համակարգի բարձրագույն պաշտոնն է, որի կրողը հանդիսանում է Հաջը Բեքթաշ Վելիի ներկայացուցիչը: Ընտրվում է բեքթաշի խալիֆների ընդհանուր ժողովում՝ նրանց թվից (Noyan 2006:316-317):

¹¹ Տեղեկությունը հաղորդող Շևքի Քոջա Բաբան մեկ այլ աշխատության մեջ կրկնում է նման հանդիպումների վերաբերյալ պնդումը՝ նշելով, սակայն, որ դրանք տեղի են ունեցել Ստամբուլի Քազըլչեշմե և Էյուսի թաղամասներում (Koca 1999:355):

Թուրքիայի ալիսաբնակ նահանգներում (Ամասիա, Չորում, Էրզինջան, Մարաշ, Սիվաս, Թոքաթ, Թունջելի) Մենդերեսի կուսակցությունը հաղթել է նշանակալի առավելությամբ (Türkiye İstatistik Kurumu 2012:26-92): ԺԿ-ն անգամ 1946 թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում, որոնք ավարտվել էին նորաստեղծ կուսակցության պարտությամբ, ստացել էր ալիսների ձայների 70%-ը (Aktürk 2015:152): Ավելին, Մալաթիայից ԹԱՄԺ պատգամավոր ընտրված¹² ալիսի դեդե Հյուսեին Դոդանի որդու՝ Իզգեթթինի փոխանցմամբ՝ մինչև 1957 թ. ԺԿ-ից ԹՀ օրենսդիր մարմնի անդամ է դարձել 29 ալիս (Çıplak 2017:80): Մենդերեսի կառավարության ու բեքթաշիաալիական համայնքի միջև խզումը սկսվել է 1957 թ. ընտրություններին նախորդող շրջանում, երբ ԺԿ-ն առավել նկատելիորեն սկսեց հակվել դեպի օրթոդոքս իսլամ: Իր բնույթով հետերոդոքս բեքթաշիականության հետևորդները 1957 թ. ընտրությունից սկսած դադարեցին աջակցել Մենդերեսին կամ աջակողմյան հայացներ ունեցող որևէ այլ ուժի (Aktürk 2015:159): Բացի դրանից ալիս-բեքթաշիների շրջանում տիրող տրամադրությունների վրա նշանակալի ազդեցություն ունեցավ Հաջը Բեքթաշ Վելիի՝ գերեզմանն ու կից դերգահը [dargāh] թանգարանի վերածելու՝ Մենդերեսի կառավարության նախաձեռնությունը¹³:

¹² Հյուսեին Դոդանը 1950 թ. ընտրություններում ԹԱՄԺ պատգամավոր է դարձել քեմալական Հանրապետական Ժողովրդական կուսակցության ցուցակով: Մի քանի ամիս անց, սակայն, Մենդերեսի հետ գրույցից հետո լքել է ՀԺԿ շարքերն ու 1951 թ. մարտի 30-ից միացել ԺԿ-ին: Տե՛ս «C.H.P. den İstifa Eden Hüseyin Doğan da D.P. ye Girdi.» *Cumhuriyet*, 31.03.1951:

¹³ 1954 թ. փետրվարի 24-ին դերգահը թանգարանի վերածելու համար Ֆինանսների նախարարության հաշվեկշռից հատկացվել էր 65.000 լիրա (թուրքական արժույթի փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ 1950-ական թթ. առաջին կեսին տատանվում էր 5,25-5,50-ի միջև): Տե՛ս T.B.M.M. Zabıt Ceridesi 1954:818:

Զնայած իսլամի հարցում հակասական դիրքորոշմանը¹⁴ և կրոնը սեփական քաղաքական շահերին ծառայեցնելու՝ դեռ պաշտոնավարման ժամանակ հնչող մեղադրանքներին (Toprak 1981:83)՝ Մենդերեսը մշտապես դրականորեն է ընդունվել և հիշվում ժամանակի սուֆիական եղբայրությունների անդամների մեծ մասի կողմից (տե՛ս, օրինակ, Atay 1994:91): Սակայն անգամ վերոգրյալի լույսի ներքո ԺԿ վերնախավի նկատմամբ բեքթաշիների վերաբերմունքն արժանի է առանձնահատուկ ուշադրության. նույնիսկ Մենդերեսի վերջին կառավարության նկատմամբ ունեցած անբարյացակամ վերաբերմունքով հանդերձ նրանք շարունակում էին համոզված լինել, որ վերջիններս հարում են իրենց թարիկաթին:

Դրա հետ կապված ուշագրավ տեղեկություններ է փոխանցում ԺԿ կառավարման մայրամուտին՝ 1960 թ. մարտի 21-ին բեքթաշիների բաբաների թևի դեղեբաբա ընտրված Բեդրի Նոյանը¹⁵: Նա վստահություն է հայտնում, որ Ադնան Մենդերեսը թարիքաթի անդամ էր՝ պնդելով, որ միաբանության հետ ԹՀ 9-րդ վարչապետին կապող օղակը վերջինիս ընտանիքի ֆինանսական գործերով փաստաբան Ֆեյզի Աքերեն Բաբան էր՝ Իզմիրից (Noyan

¹⁴ Այս հակասականության տիպիկ օրինակ է 1953 թ. մայիսի 11-ին Քըրքեհիրում վարչապետ Մենդերեսի արած աղմկահարույց հայտարարությունը, որ մեծ դժգոհություն էր հարուցել Հաջը Բեքթաշ Վելիի դերգահի վերաբացման կողմնակիցների շրջանում. «Մեր հեղափոխության պահպանումը մեր առաջին պարտականությունն է: Փակ թեքթեների վերաբացման [ընդգծումն իմն է, — Ա.Գ.], քաղաքացիական օրենսգրքում փոփոխությունների, հին այբուբենին վերադառնալու մասին խոսք անգամ զնալ չի կարող»: Տե՛ս «Başvekil Kırşehir'de Mühim Bir Hitabette Bulundu.» Milliyet, 12.05.1953:

¹⁵ Բեդրի Նոյանը (ծնվ.՝ Սալիհ Բեդրեթթին, 1912-1997 թթ.) բաբազան բեքթաշիների 36-րդ դեղեբաբան է: Ի թիվս այնի, հայտնի է նաև «Bütün Yönleriyle Bektâşilik ve Alevilik» («Բեքթաշիականությունն ու ալևիականությունը՝ բոլոր կողմերից») ծավալուն 7-հատորյակով, որն այս աշխատանքի կարևոր աղբյուրներից մեկն է: Նոյանի մասին տե՛ս Üzüm 2007:

2003:234): Իբրև այդ տեղեկատվությունն իրեն փոխանցող անձ Նոյանը նշվում է Ռեֆիք Սադրու անունով մի բեքթաշիի (Noyan 2003:69):

Հայտնի թուրք մտավորական Շևքեթ Սյուրեյյա Այդեմիրն իր «Մենդերեսի ողբերգությունը» գրքում ¹⁶ հետաքրքրական մանրամասն է բերում՝ նշելով, որ Մենդերեսի և Աքերենի շփումները սկսվել են, երբ ծնողներին ու քրոջը կորցնելուց հետո պատանի Ադնանն ապրում էր հորական տատի՝ Ֆիթնաթ Հանըմի հետ, իսկ Աքերենը զբաղվում էր Իզմիրում Մենդերես ընտանիքի ունեցվածքի հարցերով: Ավելին, որոշ տեղեկություններով, Ֆեյզի Աքերենը Մենդերեսի հետ աղմկահարույց հարաբերություններով¹⁷ հայտնի օպերային հայտնի երգչուհի Այհան Այդանի քեռին էր (Aydemir 1999:19-20): Երկար տարիներ փաստացի կառավարելով Մենդերես ընտանիքի սեփական հողատարածքը՝ նա վաստակել էր Ադնանի և նրա տատի վստահությունը (Dilipak 1990:21): Ըստ երևույթին, Աքերենը Մենդերեսի հոգևոր հովանավորությունը («վելիլիք») ստանձնել էր դեռ վերջինիս՝ Իզմիրի Ամերիկյան քոլեջում ուսանելու տարիներից: Բեքթաշիների անուղղակի վկայություններից կարելի է դատել, որ Մենդերեսի ընծայությունը թարիքաթին («նասիփ») կատարվել է հենց Աքդերենի կողմից (Noyan 2003:20):

¹⁶ Գրքում Այդեմիրը Աքերենին կոչում է «Ֆեզի Աքեր կամ Աքդեր»՝ նշելով, որ նրա հստակ անունը չգիտի:

¹⁷ Մենդերեսի հետ Այհան Այդանի սիրավեպի արդյունքում ծնված երեխայի սպանության՝ այսպես կոչված «Մանկան գործը» 1960 թ. մայիսյան հեղաշրջումից հետո Յասսընադայի դատավարությունների ընթացքում պաշտոնանկ արված վարչապետին առաջադրված մեղադրանքներից մեկն էր: «Մանկան գործով» լուսմների սղագրության տեքստին կարելի է ծանոթանալ ԹԱՄԺ գրադարանի թվային պաշարներում՝

<https://acikerisim.tbmm.gov.tr/xmlui/bitstream/handle/11543/2666/197302829.pdf> (հասանելի է՝ 17.05.2018):

Բեդրի Նոյանը նույն գրքում անդրադառնում է նաև ԹՀ 3-րդ նախագահ, ԺԿ-ական Ջելալ Բայարի՝ բեքթաշիների հետ փոխհարաբերությունների հարցին: Հղում կատարելով այդ թվում նաև Ալի Նաջի Բայքալ դեդեբաբային՝ նա պնդում է, որ Բայարը թարիքաթին է միացել Բուրսայում՝ Քյուչուք Իբրահիմ բաբայի հոգևոր հովանավորությամբ: Ուշագրավ է նաև, որ դեռ Աթաթյուրքի ժամանակներից նախագահական ապարատի գլխավոր բժիշկ Հասան Ռազրփի էրենսելը, ով հայտնի էրա նաև իբրև բեքթաշի բաբա, մինչև սեփական մահը՝ 1953 թ., եղել է նաև Բայարի մտերիմն ու անձնական բժիշկը (Noyan 2003: 69, 141):

Բեքթաշի նույն դեդեբաբան որոշակի տեղեկություններ է հաղորդում նաև ԺԿ հիմնադիր մեկ այլ անդամի՝ 50-ականների առաջին կեսի ԹՀ ԱԳ նախարար Մեհմեթ Ֆուադ Քյուփրյուլյուի՝ թարիքաթի հետ ունեցած առնչությունների մասին: Նոյանը գրում է, որ Սարաևոյի Գազի Հյուսրև-բեգ մզկիթի գրադարանի տնօրեն Ֆեյզուլլահ Բարիչի հետ անձնական զրույցում Քյուփրյուլյուն անձամբ է խոստովանել, որ բեքթաշի է: Նույն տեղեկությունը Նոյանին փոխանցել են նաև միաբանության մի շարք այլ անդամներ: Ըստ տեղեկությունների՝ սուֆիական դերգահների փակման ժամանակաշրջանում հենց Քյուփրյուլյուի անձնական արխիվում են պահվել Հաջը Բեքթաշ Վելիի գերեզմանի շուրջ գործող բեքթաշիական համալիրի գրադարանի նյութերը: Դրանք միայն նրա մահվանից հետո (1966 թ.) են վերադարձվել հետև ալթմ գտնվում են դերգահի տեղում գործող թանգարանի հաշվեկշռում (Noyan 2003:218): Հարկ է հավելել նաև, որ Քյուփրյուլյուն Գեորգ Յակոբից հետո¹⁸, ըստ էության, առաջինն է բեքթաշիականությունը

¹⁸ 20-րդ դարասկզբին գերմանական թուրքագիտության հիմնադրի հեղինակած՝ խնդրո առարկա հարցի շուրջ առաջին և դասական դարձած աշխատանքը տե՛ս Jacob, Georg. (1909). *Die Bektaschijje in ihrem Verhältnis zu verwandten Erscheinungen*. München: K.B. Akademie.

դիտարկել իբրև քննական հետազոտման առարկա (Tschudi 1960:1162): Դեռ մինչև ԹՀ հռչակությունը հրատարակված նրա «Առաջին սուֆիները թյուրք գրականության մեջ» մենագրության¹⁹ տեքստում բեքթաշիական թեմատիկան անցնում է կարմիր թելի պես (Köprülü 1976:48-54, 108-114, 257-260, 349-353): Հատկանշական է, որ ներիսլամական տարբերությունների մասին խոսելիս²⁰ Քյոփրյուլյուն հանգում է այն եզրահանգմանը, որ ալիիներն ու բեքթաշիները գործնականում նույնն են: Ըստ նրա՝ վերջիններն ապրում են քաղաքներում և ունեն կրթական ու մշակութային որոշակի ցենզ, ապա առաջինները հիմնականում գյուղական շրջանների բնակիչներ են (Melikoff 2010:233):

Հետաքրքիր է, որ Մենդերեսի իշխանության ողբերգական ավարտը բեկթաշիական մեկնաբանությամբ ներկայացվում էր իբրև աստվածային պատիժ՝ ճիշտ ճանապարհից շեղվելու համար: Այս լույսի ներքո նկարագրական է նույն դեղեբաբայի նկարագրած հետևյալ դիպվածը:

1960 թ. փետրվարի 2-ին վարչապետ Մենդերեսն ու ազգային կրթության նախարար Մեհմեթ Աթըֆ Բենդերլիօղլուն, չնայած -7°C ջերմաստիճանին և ձնաբքին, մեկնում են կենտրոնաանատոլիական Սուջուր և Հաջըբեքթաշ շրջաններ՝ հանդիպելու տեղական բնակչությանը: Ընդ որում, ուղեկցող լրագրողներին արգելվում է լուսանկարել եղանակային բարդ պայմաններում Հաջը Բեքթաշ Վելիի գերեզմանին մոտեցող վարչապետին²¹: Բեդրի Նոյանը

¹⁹ St' u Köprülü, Mehmet F. (1919). *Türk Edebiyatında İlk Mutasavvıflar*. İstanbul: Matba'a-i Âmire: Ուշադրության է արժանի աշխատության՝ Գարի Լայգերի և Ռոբերտ Դանկովի կատարած անգլերեն թարգմանությունը՝ ծավալուն ներածականով և ծանոթագրություններով՝ Id. (2006). *Early Mystics in Turkish Literature*, trans. by Gary Leiser and Robert Dankoff. London and New York: Routledge.

²⁰ Այդ տարբերությունների քյոփրյուլյուական կոնցեպտուալիզացումն ամփոփ գծերով տե՛ս Dressler 2013:151-271:

²¹ “Hacıbektaş'ın Türbesini Ziyaret Eden Başvekil.” *Milliyet*, 03.02.1960.

պատմում է Մենդերեսի այցի՝ բեքթաշիների վրա թողած տպավորության մասին.

«Ադնան Մենդերեսը մայիսի 27-ի հեղափոխությունից կարճ ժամանակ առաջ եկել էր Հաջըբեքթաշ շրջան: Նրա գալուց երեք-հինգ ժամ առաջ արևային եղանակ էր, շրջանում իրական գարնանային մթնոլորտ էր տիրում: Սակայն երբ Մենդերեսը մտնեում էր Հաջըբեքթաշին, հանկարծ երկինքը պատվեց ամպերով, և շրջանում ձնաբուք սկսվեց: Մենդերեսը Հաջիբեքթաշ այսպես մտավ:

Գնաց այցելելու Հագրեթ-ի Փիրին (Հաջը Բեքթաշ Վելիին): Հանգստարան մտնելու համար սկսեց իջնել աստիճաններով, սակայն հանկարծ սայթաքեց ու ընկավ: Հաջըբեքթաշցիներն, այս մասին լսելով, մտածեցին, որ սա աստվածային մի նշան էր. մոտ ապագայում իշխանությունից էլ է զրկվելու:

Եվ իրոք, մի քանի ամիս անց տեղի ունեցավ մայիսի 27-ի հեղաշրջումը, և Մենդերեսը զրկվեց իշխանությունից» (Noyan 2003:234-235):

REFLECTIONS AROUND THE INTERRELATIONS BETWEEN THE TURKEY'S RULING (1950-1960) DEMOCRATIC PARTY AND THE BEKTASHI SUFI ORDER

Summary

Arshak Gevorgyan
a.gevorkian@ysu.am

Keywords: *Bektashis, Alevis, Democratic Party, Adnan Menderes, Mehmet Fuat Köprülü.*

The earliest years of the Turkish Republic witnessed a radical attempt by the Kemalist government to impose Western secularist vision on post-Ottoman conservative society. This transformation included also top-down suppression against various collective religious associations, including not least the Sufi brotherhoods (*tarikats*).

Bektashis that had once competed with the Ottoman rulers for the political control of central Anatolia and later became the official order of the Janissaries, during the tumultuous period of the 1930s and 1940s yet again managed to maintain their social network, despite being outlawed and forced to go underground. After Adnan Menderes's Democratic Party (DP) secured an overwhelming victory at the first free elections held in Turkey in May 1950, all Sufi brotherhoods, including Bektashis, started to enjoy resurgence as a result of gradual revival of traditional rural values.

The present paper reflects upon the interrelations between the DP government and the followers of Haji Bektash Veli, while analysing some little-known assumptions that party leadership and Menderes himself were quite closely associated with the brotherhood.

О ВОПРОСЕ ВЗАИМООТНОШЕНИЙ МЕЖДУ ПРАВЯЩЕЙ В ТУРЦИИ В 1950-1960 ГГ. ДЕМОКРАТИЧЕСКОЙ ПАРТИЕЙ И СУФИЙСКИМ ОРДЕНОМ БЕКТАШИ

Резюме

Аршак Геворкян
a.gevorkian@ysu.am

Ключевые слова: *бекташи, алевиты, Демократическая партия, Аднан Мендерес, Мехмет Фуат Кёпрюлю.*

Первые годы Турецкой Республики отметились радикальной попыткой правительства Ататюрка навязать пост-османскому консервативному обществу секулярное видение западного типа. Эта трансформация включала также вертикальное подавление всяких религиозно-коллективных обществ, включая не в последнюю очередь и суфийских братств (*тарикатов*).

Орден Бекташи, которое когда-то конкурировало с османскими правителями за политическую власть над центральной Анатолией, а потом стало главным покровителем корпуса янычар, в бурный период 1930-1940-х также сохранил свою социальную структуру, несмотря на то, что, объявленный вне закона, был вынужден уйти в подполье.

После того, как в мае 1950 г. Демократическая партия (ДП) Аднана Мендереса одержала убедительную победу на первых свободных выборах Турции, все суфийские братства, включая Бекташи начали возрождаться, как результат постепенного оживления традиционных сельских ценностей.

В настоящей работе представлены общие контуры взаимоотношений между правительством ДП и последователями Хаджи Бекташа Вели в свете некоторых малоизвестных предположений о том, что партийное руководство и сам Мендерес были тесно связаны с братством.

Օգտագործված գրականության ցանկ

1. Aktürk, Şener. (2015). *Etnisite Rejimleri ve Milliyet*. İstanbul: İstanbul Bilgi Üniversitesi Yayınları.
2. Arar, İsmail (der.). (1968). *Hükümet Programları 1920-1965*. İstanbul: Burçak Yayınevi.
3. Aşkar, Mustafa. (2000). “Son Dönem Tekke Mecmûalarından Yeşilzâde Mehmed Salih Efendi'nin Rehber-i Tekâyâ'sı”. *Tasavvuf* 3.129-165.
4. Atay, Tayfun. (1994). *Naqshbandi Sufis in a Western Setting*. Ph.D. thesis, University of London.
5. Aydemir, Şevket S. (1999). *Menderes'in Dramı*. İstanbul: Remzi Kitapevi
6. Azak, Umut. (2010). *Islam and Secularism in Turkey: Kemalism, Religion and the Nation State*, London and New York: I.B. Tauris.
7. Bearman, Peri J., Thierry Banquis, Clifford E. Bosworth, Joannes van Donzel and Wolfhart P. Heinrichs (eds.). (2006). *Encyclopaedia of Islam, Second Edition, Glossary and Index of Terms*. Leiden: E.J. Brill.
8. Birge, John K. (1937). *The Bektashi Order of Dervishes*. London and Hartford: Luzac & Co.
9. Buehler, Arthur F. (2016). *Recognizing Sufism: Contemplation in the Islamic Tradition*. London and New York: I.B. Tauris.

10. Կլակ, Իսա Դ. (2017). *Ըմոկրատ Բարտ Ընեմննե Աեվներ եե Բեկտաշներ'նն Տնյասն եե Տոսյո-Կլլտրեալ Բաաղնյետերն (1950-1960)*. Կլեկեկ Լնսանս Կեզն, Բաղեսնր Կննթեսնտեսն.
11. Ըղղակ, Աննրադան. (1990). *Մենդերես Ընեմն*. Իստաննլ: Բեյան Կաղննարն.
12. Ըրեսսեր, Մարկոս. (2013). *Writing Religion: The Making of Turkish Alevi Islam*. օքսֆորդ: օքսֆորդ Կննթեսնտեսն Բրեսս.
13. Ըղղնր, Բանո. (2010). *The Mobilization of Political Islam in Turkey*. Նեյ Կորկ: Կամբրնջ Կննթեսնտեսն Բրեսս.
14. Ջոնգ, Բրեդերնկ Ըե. (2000). *Sufi Orders in Ottoman and Post-Ottoman Egypt and the Middle East*. Իստաննլ: Իսնս Բրեսս.
15. Կոչա, Տեղեկն. (1999). *Էս-Տեյյնդ Իաղեփե Կոչա Կրղղղ Բաբա Ըննան*. Իստաննլ: Նազենն Կաղննարն.
16. _____. (2005). *Բեկտաշնկ եե Բեկտաշն Ըերղաղարն*. Իստաննլ: Կեմ Վաղե Կաղննարն.
17. Կոթրլն, Մեղետ Բ. (1976). *Կրղ ԷԸեբնյատննա Իղկ Մտասաղննղար, 3*, Բասկն. Անկարա: Կրղ Կարն Կրոնոն Բասնեղեղ.
18. ՄասսնկարԸ, Ըղեսն. (2013). *The Alevis in Turkey and Europe: Identity and Managing Territorial Diversity*. ԼոնԸոն եե Նեյ Կորկ: ԲրոտղեղԸ.
19. Մեղկոֆֆ, Իրեն. (2010). *Իաղն Բեկտաշ ԷֆսանեԸն Ըերղեղե*, շեղ. Կրոն Աղթեկն. Իստաննլ: Կոնղնրնյերե Կնտաղարն.
20. Նոյան, ԲեԸրն. (2003). *Բլտնն Կոներնյեղե Բեկտաշնկ եե Աեղեղնկ*. Վոլ. 6. Իստաննլ: ԱրԸնղ Կաղննարն.
21. _____. (2006). *Բլտնն Կոներնյեղե Բեկտաշնկ եե Աեղեղնկ*. Վոլ. 1. Իստաննլ: ԱրԸնղ Կաղննարն.
22. օղլն, Կեյնեղ. (2015). “օսմանղն Ընեմննե Իաղն Բեկտաշ Վեղն Տլաղեսն: Կեղեղեր”. *Կրղ Կարն Կրոնոն Բեղետեն* 285.501-529.
23. Քեղտ, Մոցենս. (2008). “ԱԸնան Մենդերես, Իսլամ, եե Իսն Կոնֆղնկտ Վնտղ Ընե-Բարտն Էրա Էստաղնշմենտ”. *Religion, Politics, and Turkey’s EU Accession*, eԸ. Ըեղ Ընտրնղ Ջոնգ եե Կաղարնա ՐաւԸերե, 91-113. Նեյ Կորկ: Քաղղրաղե Մաղմղղան.
24. Տաղոյո, Ընեղ Բ. (1971). *Ատաղրկ եե Տեյմեն Աղաղն*. Անկարա: Անկարա Կոլոննո Կաղննարն.

25. T.B.M.M. *Zabıt Ceridesi* (1954), 9. dönem, 28. cilt. Ankara: T.B.M.M. Matbaası.
26. Toprak, Binnaz. (1981). *Islam and Political Development in Turkey*. Leiden: E.J. Brill.
27. Türkiye İstatistik Kurumu. (2012). *Milletvekili Genel Seçimleri 1923-2011*. Ankara: Türkiye İstatistik Kurumu Matbaası.
28. Tschudi, Rudolf. (1960). “Bektāshīyya”. *Encyclopaedia of Islam*, 2nd ed., ed. by Hamilton A. R. Gibb, Johannes H. Kramers, Évariste Lévi-Provençal, Joseph Schacht, Bernard Lewis and Charles Pellat, 1.1161-1163. Leiden: E.J. Brill.
29. Üzüm, İlyas. (2007). “Bedri Noyan”. *Türkiye Diyanet Vakfı İslâm Ansiklopedisi*, ed. Ahmet Topaloğlu ve ark., 214-215. İstanbul: Türkiye Diyanet Vakfı.
30. Акимушкин, О.Ф. (1991). «Бекташійя». *Ислам: Энциклопедический словарь*, под ред. Г.В. Милославского, Ю.А. Петросяна, М.Б. Пиотровского и С.М. Прозорова, 39-41. Москва: Наука.
31. Кондакчян, Р.П. (1983). *Турция: Внутренняя политика и ислам*. Ереван: Издательство АН Армянской ССР.